

Դոն Իսուանի խոստվանությունը

հեղինակ՝ Կարել Չապեկ
թարգմանիչ՝ Խաչիկ Հրաչյան (ռուսերենից)

Դժբախտ դոնյա Էլվիրայի մահվան վրեժը լուծվեց. դոն Իսուան Տենորիոն խոցված կրծքով պառկած էր Պոսադա դը լաս Ունինասում ու մեռնում էր:

— Թոքերի էմֆիզեմա, — փնթափնթաց տեղի բժիշկը: — Մեկ ուրիշը մի կերա դուրս կարծներ, բայց այնպիսի զզզզված caballero, ինչպիսին դոն Իսուանն է... Դժվար բան է, Լեպորելո. ճիշտն ասած, նրա սիրտը դուր չի զայիս ինձ: Ասենք, այդ հասկանալի է. վառ արտահայտված ուժասպառություն՝ այդպիսի in venere^{ան} արկածներից հետո, պարոնայք: Լեպորելո, ես քո փոխարեն համենայն դեպս քահանա կիրավիրեի. միզուցե տերդ դեռ ուշքի կզա, չնայած զիտության ներկա վիճակը... դե, չգիտեմ: Պատիվ ունեմ ողջունելու, caballeros.

Այնպես պատահեց, որ պաղբե Խասինուն նատեց դոն Իսուանի ոսքերի մոտ ու սկսեց սպասել, թե պացիենառը երբ ուշքի կզա, իսկ ինքն այդ միջոցին աղոթում էր այդ անուղղելի մեղավոր մարդու հոգու համար: «Ա՞յս, եթե ինձ հաջողվեր փրկել այս արմատացած մեղավոր հոգին, — մտածում էր բարի քահանան: — Երևում է սրան մշակել են հիմնավորապես, միզուցե դա խորտակի սրա զոռոզությունն ու հարկադրի խոնարի ապաշխարության: Ամեն մեկին բախս չի վիճակվում այսքան նշանավոր ու անխիճն մի անառակի խոստովանեցնել. այս, եղբայր, այսպիսի հազվագյուտ դեպք Բուրգոսի եպիսկոպոսին էլ չի պատահել: Մարդիկ կակտեն փափառ իրար՝ տեսեք, տեսեք ահա զայիս է պաղբե Խասինուն, նա ինքը, որ փրկեց դոն Իսուանի հոգին...»:

Պաղբեն ցնցվեց ու խաչակնքեց. մի կողմից ուշքի եկավ հպարտության սատանայական գայթակղությունից, մյուս կողմից նկատեց, որ մահամերձ դոն Իսուանը իր վառվող ու ասես հեզնական հայացքը հառել է նրան:

— Սիրելի որդյակի իմ, — որքան կարելի է սիրալիր տոնով արտաքերեց արժանավոր պաղբեն, — դու մեռնում ես. շատ շուտով կներկայանաս բարձրագույն դատավորի սեղանին, քեռնավորված քո նողկալի կյանքի ընթացքում կատարած մեղքերով: Խնդրում եմ քեզ մեր տեր աստծու սիրույն, վերցրու վրայիցդ այդ մեղքերը, բանի դեռ ժամանակ կա, քեզ վայել չէ մեկնել այն աշխարհ երկրային գործերի կեղտով ապականված, արատների անմաքուր քուրծով:

— Լավ, — պատասխանեց դոն Իսուանը, — կոստյումը կարելի է մի անգամ էլ փոխել: Պաղբե, ես միշտ աշխատել եմ հանգամանքներին համապատասխան հագնվել:

— Վախենում եմ, որ դու այնքան էլ լավ չհասկացար ինձ, — նկատեց պաղբե Խասինուն: — Ես հարցնում եմ՝ արդյոք չե՞ս ուզում զդալ ու մեղքերդ խոստովանել:

— Խոստովանեմ, — խուլ ձայնով խոսեց դոն Իսուանը: — Մի լավ սևացնեմ ինձ... Ա՞յս, տեր հայր, դուր չեք էլ պատկերացնում, թե դա ինչպես կազդի կանանց վրա:

Խոսան, — խոժողովեց բարի պատերը, — դադարիր երկրայինի մասին մտածելուց. հիշիր՝ դու պետք է զրուցես քո արարչի հետ:

— Գիտեմ, — պարկեշտությամբ առարկեց դոն Խոսանը: — Գիտեմ նաև՝ պատշաճությունը պահանջում է, որ մարդ իբրև քրիստոնյա մեռնի: Իսկ ես, տեր հայր, հույժ ջանացել եմ պահպանել պատշաճությունը... հնարավորին չափ: Երդվում եմ պատվովս. առանց ավելորդ

խոսքերի ամեն ինչ կանեմ. քանզի, առաջին, ես այնքան թույլ եմ, որ չեմ կարող երկար խոսել, իսկ երկրորդ, իմ սկզբունքը եղել է միշտ նպատակին հասնել ուղիղ, կարճ ճանապարհով:

— Ես պատշաճն եմ մատուցում քո վճռականությանը, — ասաց պաղբե Խասինտան: — Բայց նախ, սիրելի որդյակդի իմ, պատրաստվիր ինչպես հարկն է, հարցում արա խոճիդ, խոնարի ախտսանք արթնացրու մեջդ, քո արարքների հանդեավ:

Դրանից հետո դոն Խուանը աչքերը փակեց ու սկսեց հարցում անել իր խճին. իսկ պաղբեն սկսեց կամացուկ աղոթել, զի աստված զորավիզ ճամփեր ու լուսավորեր նրան:

— Ես պատրաստ եմ, հայր, — որոշ ժամանակ հետո խոսեց դոն Խուանը և սկսեց իր խոստովանությունը:

Պաղբե Խասիտոն գոհունակությամբ գլուխն էր օրորում. խոստովանությունը թվում էր անկեղծ ու ապառիչ. դրանում ստի ու սրբապետության, սպանությունների, ուխտադժության, գոռողության, խարեւության ու մատնության պակասություն չեր զգացվում... Խոկապես որ դոն Խուանը մեծ մեղագործ էր: Բայց հակարծ նա թեց, ասես հոգնելով, ու փակեց աչքերը:

— Հանգստացիր, սիրելի որդյակ, — համբերությամբ արձագանքեց քահանան, — իսկ հետո կշարունակես:

— Ես վերջացրի, արժանապատիվ հայր, — պատասխանեց դոն Խուանը: — Իսկ եթե ինչ-որ բաներ մոռացա, հավանորեն դատարկ բաներ են: Տեր աստված ողորմաբար կների դրանք:

— Ինչպե՞ս թե, — բղավեց պաղբե Խասինտոն: — Դու այդ անվանում ես դատարկ քա՞ն: Հապա շնացումները, որ դու կատարել ես ամեն քայլափոխի, ամբողջ կյանքումդ, հապա կանայք, որոնց զայթակրել ես, հապա անմարուր կրքերը, որոնց տրվել ես այնպես անզուսա կերպով: Ո՛չ, եղբայր, հաճիր խոստովանել ինչպես հարկն է, անառա՛կ, քո անամոյթ արարքներից ոչ մեկը անտես չի մնա աստծու աչքից: Ավելի է լավ զոշաս քո զագրելիություններն ու մեղավոր հոգին թեթևացնես:

Դոն Խուանի դեմքին տանջանքի ու անհամբերության նշաններ երևացին:

— Ես արդեն ասացի ձեց, հայր, որ վերջացրի, — համառորեն կրկնեց նա: — Պատվովս եմ երդվում, որ այլևս խոստովանելիք չունեմ:

Այդ րոպեին Պոսադա դը լաս Ռեինաս հյուրանոցի տերը հուսահատ մի ճիշ լսեց վիրավորի սենյակից:

— Տեր ընդ մեզ, — բացականչեց նա, իսականքելով, — ինձ այնպես է թվում, թե պաղբե Խասինտոն սատանային դուրս է քշում խեղճ սենյորի միջից: Տեր աստված, այնքան էլ սրտովս չի, երբ իմ հյուրանոցում այդպիսի բաներ են կատարվում:

Վերոհիշյալ ճիշը բավական երկար շարունակվեց — այդ ժամանակամիջոցում կարելի էր բակա խաշել. մերթ ընդ մերթ այն անցնում էր խուլ, համառ հորդորների, հետո հնչում էր վայրի ոռնոցը: Հանկարծ վիրավորի սենյակից դուրս թռավ պաղբե Խասինտոն՝ հնդկահավի պես կարմիր և, տիրամորն օգնության կանչելով, նետվեց դեպի եկեղեցի: Դրանից հետո հյուրանոցում լուլթյուն տիրեց. միայն ընկճված Լեպորելլոն անաղմուկ ներս մտավ իր տիրոջ սենյակը, որտեղ դոն Խուանը, աչքերը փակ պառկած, տնքում էր:

Ճաշից հետո քաղաք ժամանեց Հիսուսյանների Ընկերության անդամ պաղբե Իլդենֆոնսոն. նա, զորի հեծած, Մաղրիդից գնում էր Բուրգոս. և քանի որ օրը շատ շոգ էր, պաղբե Իլդենֆոնսոն

ճգնավորի տեսք ուներ, չորացած, ոնց որ հին երշիկ, և այնպիսի թանձը հոնքերով, ոնց որ պաշտոնաթող հեծելազորայինի թևատակի մազերը:

Տանտիրոջ հետ թան խմելով, ճիզվիտը հայացը հառեց հայր Խասինտոյի վրա, որն իզուր էր շանում թաքցնել, որ մի բանից նեղվում է: Այնպիսի լրություն էր, որ ճանճերի տզզոցը թվում էր ամայի որոտ:

— Այ թե բանն ինչ է, — վերջապես խոսեց տանջահար պադրե Խասինտոն: — Այստեղ մեզ մոտ մի մեծ մեղազործ կա, որը վերջին շնչումն է: Դոն Իլդեֆոնսո, դա այն նույն տիբրահամբավ դոն Խոստան Տենորիոն է: Այստեղ նա ինչոր վեճ կամ մենամարտ է սարքել, — կարճ ասած, զնացի նրան խոստովանեցնելու. սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում. խոսք չունեմ, շատ լավ էր խոստովանում. բայց երբ բանը հասավ վեցերորդ պատվիրանին, ասես կալանդի մեջ առան, և ես այլևս ոչ մի խոսք չկարողացա պոկել նրանից: Ասում է՝ զղջալու բան չունի: Աստված իմ, այն էլ այդպիսի ապերասան մարդը: Որ մտածում եմ, թե նա երկու Կաստիլիացիների մեծագույն անառակն է... հավասար չունի ոչ Վալենսիայում, ոչ Կադիցում... Ասում են, վերջին տարիների ընթացքում նա գայթակղել է վեց հարյուր իննսունյոթ կուսանք. դրանցից հարյուր տասներեքը զնացել են կուսանց, մոտ հիսունը զոհ են զնացել հայրերի կամ ամուսինների արդարացի զայրույթին և մոտավորապես նույնքանի է սիրտը պայթել է վշտից: Եվ ահա, պատկերացրեք, դոն Իլդենֆոնս, այդպիսի հեշտասերը մահվան մահնում երես առ երես պնդում է, իբրև թե շնության in puncto^[2] խոստովանելու բան չունի: Դուք ի՞նչ կասեք սրան:

— Ոչինչ, — պատասխանեց ճիզվիտը: — Եվ դուք նրա մեղքերին թողություն չտվի՞ք:

— Իհարկե ոչ, — պատասխանեց վշտահար պադրե Խասինտոն: — Բոլոր հորդորներն ապարդյուն անցան: Այնպես էի խոսում, որ քարերն ել կզղային, բայց այդ անքանների պետի վրա ոչինչ չի ազդում: «Մեղավոր եմ հայր, — ասում է, — զողության մեջ, երդումներն ել եմ խախտել և էի ինչ ուզեք, բայց ինչի մասին հարցնում եք՝ բան չունեմ ասելու»: Եվ գիտե՞ք դժվարությունը որն է, դոն Իլդեֆոնսո, — հանկարծ պոռթկած պադրեն ու արագ խաչակնքեց: — Ես կարծում եմ, որ նա կապված է եղել սատանայի հետ: Ահա թե ինչու չի կարողանում խոստովնել այդ: Դա եղել է անմարուր կախարդանք: Նա կանանց հրապուրել է դժիսքի իշխանությամբ: — Հայր Խասինտոն ցնցվեց: — Դուք միայն տեսնեիք նրան, որմինե: Ես կասեի՛ այդ երևում է նրա աչքերից:

Դոն Իլդեֆոնսոն, անդամ Հիսուսյանների Ընկերութայն, լուր մտածում էր:

— Եթե ուզում եք, ես կտեսնեմ այդ մարդուն, — վերջապես ասաց նա:

Դոն Խոսունը ննջում էր, երբ հայր Իլդեֆոնսոն անաղմուկ մտավ սենյակ ու ձեռքի շարժումով Լեպորելլոյին դուրս հրավիրեց. հետո ճիզվիտը նստեց անկողնու գլխավերևում դրված աթոռին ու սկսեց զննել մեռնողի նիհարած դեմքը:

Երկար լրությունից հետո վիրավորը տնքաց ու բացեց աչքերը:

— Դոն Խոսուն, — մեղմությամբ սկսեց ճիզվիտը, — երևի դժվարությամբ եք խոսում:

Դոն Խոսունը թույլ գլխով արավ:

— Այդ կարևոր չէ, — շարունակեց ճիզվիտը: — Սենյոր Խոսուն, ձեր խոստովանությունը մի կետում մնաց մութ: Ես ձեզ հարցեր չեմ տա, բայց, թերևս, դուք հասկացնել կտար՝ համաձա՞ն եք նրան, ինչ ես կասեմ ձեր մասին:

Վիրավորի աչքերը համարյա վախով ուղղվեցին կուսակրոնի անշարժ դեմքին:

— Դոն Խուլան, — համարյա աշխարհիկ տոնով սկսեց պադրե Իլդեֆոնսոն: — Ես վաղուց եմ արդեն յսել ձեր մասին ու մտածել եմ, թե ինչու եք դուք մի կողջից մյուսին նետվում, մեկ սիրուց՝ մյուսին, ինչու երբեք չեք կարողացել ինել և մնալ երանության ու հանգստի այն վիճակում, որ մենք, մարդիկս, երջանկություն ենք անվանում...

Դոն Խուլանը տիսուր քմծիծաղով մերկացրեց ատամները:

— Մեկ սիրուց՝ մյուսին, — հանգիստ շարունակեց դոն Իլդեֆոնսոն: — Ասես նորից ու նորից կամենում էիք մեկնումեկին համոզել, — երևում է, ինքներդ ձեզ, — որ դուք արժանի եք սիրո, որ դուք հենց այն տղամարդկանցից եք, որոնց կանայք սիրում են — դժբախտ դոն Խուլան:

Վիրավորի շրթունքները շարժվեցին, թվաց, թե նա կրկնում է վերջին բառերը:

— Մինչդեռ դուք երբեք տղամարդ չեք եղել, դոն Խուլան, — բարեկամական տոնով շարունակեց կուսակրոնը: — Միայն ձեր ոգին էր տղամարդու ոգի, և այդ ոգին ամաչում էր, սենյոր, և հուսահատորեն աշխատում թաքցնել, որ բնությունը ձեզ զրկել է այն բանից, ինչը շնորհված է ամեն մի կենդանի արարածի...

Մեռնողի անկողնուց լսվեց մանկական հեծկլտոց:

— Ահա թե ինչու դուք պատանեկությունից տղամարդու դեր եք խաղացել, դոն Խուլան. դուք եղել եք խելահեղորեն քաջ, արկածախնդիր, հպարտ ու սիրել եք ձեզ ի ցույց դնել — և այդ ամենը յոկ նրա համար, որպեսզի ձեր մեջ խեղդեք այն ստորացուցիչ գիտակցությունը, որ ուրիշները ձեզանից լավ են, որ նրանք ավելի են տղամարդ, քան դուք. և դրա համար է շռայլորեն ապացույցներ էիք կուտակում իրար վրա. ոչ ոք չեք կարող ձեզ հետ համենատվել, որովհետև ձևացնում էիք միայն, անպտուի էիք — և դուք ոչ մի կին էլ չեք գայթակղել, դոն Խուլան: Դուք երբեք չեք իմացել ինչ է սերը, միայն յուրաքանչյուր հանդիպմանը հմայիչ ու ազնիվ կնոջ հետ տենդագին կերպով ձգտել եք կախարդել նրան ձեր ոգով, ասպետությամբ, ձեր կրօնվ, որ ինքներդ եք ներշնչել ձեզ. այդ ամենը դուք կարողանում էիք անել կատարելապես, քանզի դեր էիք խաղում: Բայց ահա վրա էր հասնում այն պահը, երբ կնոջ ոտքերը ծալվում են — օ՛, դոն Խուլան, դա, երևի, դժոխք էր ձեզ համար. այո, դժոխք, քանզի այդ պահին դուք զգում էիք ձեր շարարաստիկ հպարտության նոպան ու միաժամանակ ամենահավոր ստորացումը: Եվ դուք ստիպված էիք դուրս արծնել այն զրկից, որ նվաճել էիք կյանքի գնով, ու փախչել, դժբախտ դոն Խուլան, փախչել նվաճված կնոջից, այն էլ ինչ-որ գեղեցիկ ստով այս հաղթական շուրթերին: Դոն Խուլան, դա հավանորեն դժոխք էր:

Վիրավորը երեսը դարձրած դեպի պատը, արտասվում էր:

Դոն Իլդեֆոնսոն ոտքի ելավ:

— Խե՛ղճ, — ասաց նա: — Նույնիսկ սուրբ խոստովանությանը ամաչում էիք ընդունել այդ: Տեսնում եք, ամեն ինչ վերջացավ, բայց ես չեմ ուզում պադրե Խասինույին զրկել զղացող մեղսագործից:

Եվ նա ճամփեց քահանայի ետևից. երբ հայր Խասինուն եկավ, դոն Իլդեֆոնսոն ասաց նրան.

— Ահա թե ինչ, տեր հայր, նա ամեն ինչ ընդունեց ու արտավեց: Անկասկած, նրա զղումն անկեղծ է. թերևս, մենք կարող ենք նրա մեղքերին թողություն շնորհել:

1. ↑ սիրային (լատ.):

2. ↑ կետում (լատ.):